



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԴԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2017 թվականի N 81 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունվարի 12-ի N 5-Ա հրամանը՝

որոշում եմ

1. Հաստատել 2017 թվականի 2-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Արծվաբերդ, Մովսես, Վերին Կարմիրաղբյուր և Սևքար համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացվելիք հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական

հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Մարզպետի ժամանակավոր
պաշտոնակատար



Կ. ԱԴԱՄՅԱՆ

2017 թվ ախ անի ն Յ այ սա տանի Յ անր ապե տու թյ ան Տալուշի մարզի Արծվաբերդ, Վեդին, Կարմիր աղբյուր և Սևքար համայնքներում իր ախ ան աջ վել իք իր ախ ան և մասնագի տակ ան հսկողութայ ան բնագալ առ ը և հսկողութայ ըն ըն իր ախ ան աջ նող աք խատանք այ ի ն խմբի կազմը

h/h	Համայնքի անվանում	Իրականացվելիք հսկողութայն ժամանակա հատվածը	Իրականացվելիք հսկողութայն բնագավառ	Հսկողութայն իրականացնող կաշտոնատար անձիք	Անուն, ազգանուն
1.	Արծվաբերդ	2-րդ եռամսյակ	բնապահպանութայն, արտակարգ իրավիճակներ, աղբահանութայն	Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ակինյան Սամվել Գևորգյան Գագիկ Մատինյան Միքայել Ղալումյան
2.	Մոլվես		բնապահպանութայն, արտակարգ իրավիճակներ, ՏԻՄ պարտադիր լիազորութայններ, առևտուր, ֆինանսներ, աղբահանութայն	Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ	Ֆելիքս Ակինյան Գագիկ Մատինյան Սամվել Գևորգյան Աշոտ Մարդանյան Գուրգեն Հարությունյան Ժորա Խաչատրյան Միքայել Ղալումյան

<p>3. Վերին կարմիրադրյուր</p>	<p>բնապահականություն, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, արտակարգ իրավիճակներ, աղբահանություն, առևտուր</p>	<p>Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ</p>	<p>Ֆելիքս Ափինյան, Սամվել Գևորգյան Աշոտ Մարդանյան Գագիկ Մատինյան Միքայել Ղալումյան Գուրգեն Հարությունյան</p>
<p>4. Սնցար</p>	<p>բնապահականություն, արտակարգ իրավիճակներ, ՏԻՄ պարտադիր լիազորություններ, առևտուր, ֆինանսներ, առևտուր, աղբահանություն</p>	<p>Խմբի ղեկավար, Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ Խմբի անդամ</p>	<p>Ֆելիքս Ափինյան Գագիկ Մատինյան Սամվել Գևորգյան Աշոտ Մարդանյան Գուրգեն Հարությունյան Ժորա Խաչատրյան Միքայել Ղալումյան Գուրգեն Հարությունյան</p>

ԱՇ ԽԱՏԱԿԱՍՏՄԻ ՂԵԿԱՎԱՐ



Ի. ՂԱՎԹՅԱՆ